AMERIABANK

16.04.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.4623.20

Բենեֆիցիար՝
«Ավիառումնական կենտրոն» ՓԲԸ

ԹԻՎ O.AB.100.12CIB.PIED.0.11146.19 ԵՐԱՇԽԻՔԻ

(ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Ավիառումնական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՖԼԱՅՄԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 12.12.2019թ. կնքված «Պետության կարիքների համար «Ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ միասին» ծառայության մատուցման» թիվ ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) ներքո Պրինցիպալի կողմից ստացված կանխավճարի դիմաց Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից Բենեֆիցիարի օգտին 17.12.2019թ. թողարկված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.11146.19 բանկային երաշխիքի (այսուհետ՝ Բանկային երաշխիք) գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև 22 հունիսի 2020թ. ներառյալ, ուստի՝ Բանկային երաշխիքի գծով ցանկացած վճարման պահանջ Բենեֆիցիարի կողմից կարող է Բանկին ներկայացվել մինչև 22 հունիսի 2020թ. ներառյալ:

Բանկային երաշխիքի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝ **Սուրեն Քոչարյան**

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ՝ (374 10) 56 11 11
Ֆ՝ (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info @ ameriabank.am

HERE AND BEYOND

245518

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 4

12.12.2019 թ. կնքված N ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20 ծածկագրով գնման
պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան 15.04.2020 թ.

«Ավիառուսումնական կենտրոն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ **Պատվիրատու**) ի դեմս տնօրեն Գ. Խաչատրյանի, մի կողմից, և «ՖլայՄի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ **Կատարող**), ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր.

հիմք ընդունելով այն հանգամանքները, որ, նախ՝ ՀՀ Կառավարության 16.03.2020 թ. թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրության իրավական ռեժիմի ուժով արգելվել է ուսումնական գործընթացների կազմակերպումը և արդյունքում 12.12.2019 թ. կնքված N ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) 6-րդ կետի իմաստով առաջացել է անհաղթահարելի ուժ, որի պատճառով սույն թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 15-ը (31 օր) անհնարին է դարձել իրականացնել ուսումնական թռիչքները, իսկ մյուս կողմից՝ ՀՀ Կառավարության 13.04.2020 թ. թիվ 543-Ն որոշմամբ արտակարգ դրության ռեժիմը երկարաձգվել է մինչև մայիսի 14-ը, և

ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ Կառավարության թիվ 298-Ն, թիվ 543-Ն որոշումներով, 12.12.2019 թ. կնքված N ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20 ծածկագրով գնման պայմանագրի 6-րդ կետով՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1) Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել արտակարգ դրության ավարտից հաշված երեսունմեկ (31) օրով՝ մինչև 15.06.2020 թվականը, Պայմանագրի Հավելված 1-ում ժամանակացույցը սահմանել համաձայն՝ սույն Համաձայնագրի Հավելված 1-ի,

2) կատարողը պարտավորվում է ներկայացնել կանխվճարի բանկային երաշխիքի փոփոխություն, դրա գործողությունը երկարաձգելով մինչև 20.06.2020թ.,

3) սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը,

4) սույն համաձայնագրով Կողմերի չնշած պարտավորությունները մնում են անփոփոխ,

5) համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

«Ավիառուսումնական կենտրոն» ՓԲԸ	**ԿԱՏԱՐՈՂ** **«ՖլայՄի» ՍՊԸ**
Հասցե՝ Ք. Երևան, Զվարթնոց օդանավակայան «Արդշինբանկ» ՓԲԸ ՀՀ 2470642071180000 ՀՎՀՀ 01204026	Ք. Երևան, Թումանյան 23 «Ամերիաբանկ» ՓԲԸ ՀՀ 1570049903290100 ՀՎՀՀ 02688945
Տնօրեն՝ _____ Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ /ստորագրություն/	Տնօրեն՝ _____ Ա. Սարգսյան /ստորագրություն/

Հավելված 1
ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20 ծածկագրով
գնման պայմանագրում փոփոխություն կատարելու
վերաբերյալ թիվ 3 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
						Հասցեն	Ժամկետը**
1	60421400/5	Առարկան՝ ուսումնական միաշարժիչ ինքնաթիռ: Ինքնաթիռի թռիչքային ժամերի քանակը՝ առավելագույնը 201 ժամ 50 րոպե թռիչքային ժամ: Ինքնաթիռը պետք է համապատասխանի ներքոհիշյալ բոլոր պահանջներին: 1. Ինքնաթիռը պետք է ունենա միջազգայնորեն ընդունված տիպի սերտիֆիկատ: 2. Առավելագույն թռիչքային զանգվածը՝ 1500 կգ: 3. Ուժային համակարգի քանակը՝ 1: 4. Թռիչքային անձնակազմի տեղադրությունը՝ 2 օդաչու իրար կողք տեղավորված: Թռիչքների կառավարման համակարգը՝ 2 օդաչուների տեղից բռնիչով կամ շտուրվալով, ուղղության ղեկով, ոտնակներով: 5. Ուղևորային տեղերի քանակը՝ նվազագույնը 2 հոգի: 6. Թռիչքի բարձրությունը՝ ոչ պակաս 3000 մ: 7. Վերթիռի հեռավորությունը՝ ոչ	դրամ	42,000000	1	Ք. Երևան, 0042 «Զվարթնոց» օդանավակայան	15.06.2020 թ

		ավել 900 մ: 8. Ինքնաթիռը պետք է համալրված լինի DME հեռավորության չափման դիստանցիոն համակարգով, VOR նավիգացիոն կայանով, մեկ GPS նավիգացիոն համակարգով, ADF ուղղության ինքնաշխատ որոնման սարքով, մեկ VHF ռադիոկայանով: 9. Պետք է ապահովված լինի օդանավի շահագործման հնարավորությունը գետնի վրա արտաքին օդի ջերմաստիճանի ոչ պակաս -15-ից +35 աստիճանի պայմաններում: 10. Շարժիչը՝ մխոցային: 11. Բաց տարածքում ինքնաթիռի պահպանման համար մատակարարման հավաքածուում պետք է ընդգրկված լինեն ծածկույթներ (չեխոլ) և փականներ: 12. Ինքնաթիռը ուսումնական թռիչքներ իրականացնելու համար պետք է ունենա գործող և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի համար ընդունելի սերտիֆիկատներ (գրանցման և թռիչքային պիտանիության սերտիֆիկատներ, աղմուկի և ռադիոկայանի վկայականներ) և համապատասխանի ուսումնական թռիչքներ իրականացնելու համար նախատեսված թռիչքային պիտանիության ապահովման պահանջներին: 13. Ինքնաթիռը պետք է համապատասխան					

		կարգով թույլատրված լինի շահագործման: Համապատասխան փաստաթղթերը դրված լինեն ինքնաթիռի փաստաթղթերի հետ: 14. Մատակարարողը պետք է ապահովի ինքնաթիռի տեխնիկական սպասարկումը: 15. Մատակարարողը պետք է կրի ինքնաթիռի մատակարարման բոլոր ծախսերը, այդ թվում ինքնաթիռի ապահովագրության ծառայությունների, ժամանակավոր պահպանման, ինքնաթիռի առաքման, մաքսատուրքերի վճարման, ինչպես նաև ԱԱՀ-ի վճարումն իրականացնի իր սեփական միջոցների հաշվին: Մատակարարողը պարտավոր է պետական պատվիրատուին ապահովել բոլոր երաշխիքային պարտականությունների կատարումը, ավիացիոն տեխնիկայի և ինքնաթիռ արտադրողի, ներառյալ շահագործման փաստաթղթերի բոլոր փոփոխությունները: 16. Ինքնաթիռի լիցքավորումը պետք է իրականացվի տվյալ տիպի ինքնաթիռի շահագործման ձեռնարկում նշված վառելիքով: 17. Ինքնաթիռի անձնակազմը, ներառյալ օդաչու-հրահանգիչը, ուսանող-օդաչուն, ինչպես նաև երրորդ անձինք պետք է լինեն ապահովագրված: 18. Մրցույթի մասնակիցը իր միջոցներով					

		իրականացնում է հավելյալ ուսումնական վարժանք, եթե կատարվելու է նախորդ ուսումնաթռիչքների ժամանակ օգտագործված «Դայմոնդ 40» ինքնաթիռի փոփոխություն՝ հիմք ընդունելով ARM-AIR CREW GM 1 FCL.710 կանոնակարգը: 19. Մասնակիցը պետք է ապահովի ծրագրի շրջանակում թռիչքների կատարումը իր օդաչու-հրահանգչի միջոցով:					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020 թվականի հունիսի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Ավիառուսումնական կենտրոն» ՓԲԸ

Ք. Երևան, Զվարթնոց օդանավակայան

Արդշինբանկ ՓԲԸ

ՀՀ 2470642071180000

ՀՎՀՀ 01204026

Տնօրեն՝ _____ Գ. Խաչատրյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՖլայՄի» ՍՊԸ

Ք. Երևան, Թումանյան 23

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՀ 1570049903290100

ՀՎՀՀ 02688945

Տնօրեն՝ _____ Ա. Սարգսյան

/ստորագրություն/

Կ.Տ